**«Տ-ՄԵԴ»**

**ՓԲԸ**

(գրանցման համար՝ 286.120.972973, ՀՎՀՀ՝ 02667028, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան փ. 26/1)

---

ՀՀ Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավար

Պարոն Վ. Սամսոնյանին

«Տ-ՄԵԴ» ՓԲԸ Գլխավոր տնօրեն

Գ. Թառլամազյանից

Հարգելի Պարոն Սամսոնյան,

Ի պատասխան 02.04.2024 թվականի № 1/1-09/21 Ձեր դիմումի, հայտնում ենք Ձեզ, որ չենք առարկում մեր ընկերության սեփականություն համարվող տարածքում գտնվող այգու հատվածը անվանակոչել Վլադիլեն Բալյանի անվամբ։

Կազմակերպչական աշխատանքների հետ կապված՝ պատրաստ ենք համագործակցության։

Հարգանքով՝

Տ-ՄԵԴ» ՓԲԸ Գլխավոր տնօրեն Գ. Թառլամազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 4-22-00, Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

N 1/1-09/21
«02» 04 2024թ.

«Տ-ՄԵԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ ԳԵՎՈՐԳ ԹԱՌԼԱՄԱԶՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Թառլամազյան

Համաձայն ՀՀ Գյումրի համայնքի ղեկավարի 23.05.2018թ թիվ 874-Ա որոշման՝ Շիրակի մարզի Գյումրի համայնքի Ռուսթավելի փողոց 5 բնակելի տունը (կադաստրային ծածկագիր՝ 08-001-0725-0058, մակերեսի չափը՝(հա) 0.060177) անշարժ գույքի առուվաճառի պայմանագրով հանդիսանում է «Տ-ՄԵԴ» ՓԲԸ-ի սեփականություն:

2024թ-ին լրանում է հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Շիրազի 110, եւ համաճանաչ կոմպոզիտոր Վլադիլեն Բալյանի 100-ամյակները: Այս երկու կարեւոր հոբելյանների առիթով Գյումրու համայնքապետարանը նախաձեռնել է մի շարք հանդիսավոր միջոցառումներ: Ինչպես գիտեք՝ Վլադիլեն Բալյանն ու Հովհաննես Շիրազն են հեղինակը հանրահայտ «Գյումրի-Լենինական» երգի, որը 2013 թվականից Գյումրի քաղաքի օրհներգն է: Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ խնդրում ենք Ձեր թույլտվությունը Ձեզ հատկացված տարածքի այգու հատվածը, որը հիմա Գյումրու ամենահայտնի անկյուններից մեկն է ու զբոսաշրջիկների կողմից ամենաայցելվող վայրերից մեկը, անվանակոչել Վլադիլեն Բալյանի անունով: Նախատեսվում է այգում տեղադրել խորհրդանշական ցուցատախտակ՝ նշումով, որ անվանակոչումը տեղի է ունեցել հոբելյանական տարեթվերի առիթով, ինչպես նաեւ այգու հատվածում ունենալ ձայնային ինստալացիա՝ երկու մեծանուն հայորդիների համատեղ 3 ստեղծագործությունները պարբերաբար հնչեցնելու համար: Ցուցատախտակի, ձայնային սարքավորումների հարցերը հոգում է Գյումրու համայնքապետարանը: Ձեր համաձայնությունը որեւէ հավելյալ պարտավորություն

բացման արարողության ժամանակ պատշաճ հղում կարվի Ձեր ընկերության ու տարածքի մասնավոր լինելու հանգամանքին:

Կանխահայտ շնորհակալություն:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Գ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

Կատարող՝ Լ. Թովմասյան
Մշակույթի և երիտասարդության հարցերի բաժին
Հեռ՝ +312.2.2245